ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի հունիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2016 թվականի հունիս ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2269.7 մլն դրամ: 1-ին կիսամյակի ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 12856.1 մլն դրամ՝ պլանավորված 12800.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 0.4 %-ով կամ 56.1 մլն դրամով, նույնչափ գերազանցելով նաև նախորդ տարվա փաստացի մուտքերի ցուցանիշը:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 85 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 6 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 24 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 23.0 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 110 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 68-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 11-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 8-ը՝ գործունեության չծավալման, 5-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և հարկային հաշվանցումների (վերադարձի) հիմնավորվածության և 13 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 10 վարչական գործ՝ 16.7 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 2 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 3.4 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 45 վարչական գործով սահմանվել է 640.0 հազար դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5316 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 4352:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել է թվով 25 պայմանագիր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 14 վարձու աշխատողի՝ 3.1 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 33 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԼՂՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Շահութահարկի մասին», «Եկամտային հարկի մասին», «Հաստատագրված վճարների մասին» և «Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքներում արտոնություններ նախատեսող նախագծերի փաթեթը:

2016թ. հունվար-մայիս ամիսներին պետական բյուջեի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների պլան-առաջադրանքների կատարման ընթացքի, 2-րդ եռամսյակում կանխատեսվող մուտքերի, ինչպես նաև ապրիլյան ռազմական գործողություններով պայմանավորված առաջացած խնդիրների քննարկման նպատակով հունիսի 24-ին հարկ վճարողների կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ կազմակերպվել է աշխատանքային խորհրդակցություն:

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում նախարարության օպերատիվ հետախուզության, հսկողական և սպասարկման գործառույթ իրականացնող 4 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հաշվետու ամսում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 678 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել հարկային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կազմակերպվելիք բաց և փակ մրցույթների վերաբերյալ հայտարարություն:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը (2015թ. տարեկան արդյունքներով):

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 293, ելքագրվել՝ 142 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: